Գ Լ Ո Ւ Խ Ը.

Ատելութիւն Լատինաց։ Ղաֆար աուրքն։ Պարոն Մուրատ և յիշատակիք նորին։ Խնդիր Գողգոթայի։ Աքսոր Զաքարիա վարդապետի. Փոխանորդ Յովհաննէս վարդապետ. Ազգային Ժողով 'ի Կոստանդնուպոլիս։ Խնդիր հաշուոց Ս. Ամառայն՝ ելից և մտից։

ԲԱՆԶԻ Լատինք նախ քան զժամանել հրովարտակին վասն պատարագի Գերեզմանին Քրիստոսի՝ այնպիսի անարգութեամբ վարէին ընդ միաբանս Հայոց, մինչ ասել յայտնապէս չունէլ նոցա տեղի ինչ 'ի Ս. Յարութիւն, և այսպիսի բանք առաւել զայրանային 'ի ժամ աւելածութեան. և յաւուր միում այնքան դան հարին զժամարար վարդապետն եւ ծաղկին զհերս գլխոյ և մօրուաց նորին՝ մինչեւ ասել բազմոց թէ մեռաւ, զոր լուեալ Պողոսի լուեաց խապտա, թէպէտ Քաղաքապետն եւ այլազգի դռնապանք գրգռէին զնա լինիլ ամբաստան եւ մտանել 'ի դատ, այլ նա արար պատասխանի թէ՝ չիք խռովութիւն 'ի միջի մերում, բազում անգամ պատահեալ է այսպիսի դէպք, որոց համբերեալ են Հայք, այժմ Լատինք դադարեալ են սակաւ ինչ այնպիսի եղեռնութեանց. զի փոյթ միաբանացն Հայոց էր պաշտպանութիւն իրաւանց և ժառանգութեան ազգին՝ եւ ոչ յայիշտակելոյ զայլոցն, զի թմրութիւն եւ տարտամութիւն միշտ զկորուստ դուշակեն. նմին իրի արտասուօք գրէր Պողոս առ Զաքարիա, իբր 'ի կաթսայ եռանդեան, զի վիշտն 'ի վեր քան զկար մարդոյ էր, և եթէ չլինէր օգնութիւն, ընդունայն էր ճիգն երկուց կողմանց, զի ստացան զանուն պարծանաց և յամենայն ուրեք հրաշակեցաւ, և ուրախ եղեն ընդ երկնաճիր պարգեւս Տեառն։ Ուրեմն պարտ էր ջանալ վասն հրովարտակին, զի մի ուրախութիւնն 'ի սուգ դարձցի. չեղեւ ինչ այլոց վնաս՝ զի զոր ինչ ունէին, զնոյնս ունին դարձեալ անթերի. զի՞նչ վնաս եթէ Հայք ևս կատարեսցեն զպաշտամունս իւրեանց, որք այնքան զծախս և զծանրութիւնս բառնային։ Տրտունջ հատան ազգայինք՝ իբր թէ միաբանք դիտմամբ յարուցանեն զվէճս, և թէ խարդախութիւն և անհամաձայնութիւն